ՀԲԵՍՄԲԱԿՈՒԹՅՈՒՆ Հ(Բ)Կ ԿԿ-Ի ԷԿՈՆՈՄԻԿՈՍՆԵՐ

338.98
Հ 24
ԱՎ

ՆԱԽԱԳԻԾ

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ

—

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ—1929

Գիտական Գրադարան
Գ. Բուրատինոյի անվան
Գրադարան
Библиотека
12315-57

.1 8. SEP. 2013

32022

240

14855-57

ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Այս ծրագիրը սահմանված է տնտեսական քաղաքականություն ուսումնասիրող քաղաքային և գյուղական խմբակների, ինչպես նաև իրիկնային կուսխորհրդային դպրոցների տնտեսագիտական դասընթացքների համար։

Դասընթացքի հիմնական խնդիրն է ցույց տալ, որ խորհրդային իշխանության տնտեսական քաղաքականությունը սոցիալիզմի կառուցման քաղաքականություն է։

Տնտեսական քաղաքականության դասընթացքների մշակումը հատակ հասկացողություն պետք է տա ոչ միայն կուսակցության տնտեսական քաղաքականության ընդհանուր սկզբունքային հիմունքների, այլև այդ սկզբունքները սոցիալիստական շինարարության զանազան բնագավառներում իրականացնելու կոնկրետ միջոցների մասին։ Ընդհանուր և կոնկրետ հարցերի շաղկապման այսպիսի հիմունքով միայն ունկնդիրը կկարողանա վորոշակի պարզաբանել կուսակցության տնտեսական քաղաքականության հետևողական լենինյան գիծը և ըմբռնել նրա առանձին հարցերի շուրջ մղվող պայքարի եությունը։ Դա կոգնի ունկնդրին պարզաբանելու աջերի տարած գծի ամբողջ վտանգը,)— գիծ՝ վոր ըստ եության հանգում է սոցիալիստական շինարարության ծրագրի վերաց-

ման,—)և սոցիալ-դեմոկրատական տեսությունների գիրկն ընկած տրոցկիստների տնտեսական դեղատոմսերի սխալական բնույթը։

Այս նկատառումով էլ ծրագիրն այնպես է կառուցված, որ առաջին չորս նոր թեմաներից հետո, ուր կուսակցության գլխավոր գիծն է քննարկվում, գալիս է չորս նոր թեմա, ուր վերլուծվելու է սոցիալիստական շինարարության կոնկրետ բնագավառների տնտեսական քաղաքականությունը։

Առաջադրվող ծրագիրը այնպիսի հաշվով է կառուցված, որ յուրաքանչյուր թեմայի մշակումն ընթանում է կոնտրոլ՝թվերի, պետպլանի հնգամյակի յեվ գլխավոր պլանի ելեմենտների հիման վրա։

Վերևում ասածներից բացի, տնտեսական քաղաքականության ծրագրի նման դիրքավորումը իշխում է անմիջապես՝ Համ Կ (բ)Կ XV՝ համագումարի և XVI կոնֆերենցիայի վորոշումների մեջ ձևակերպված՝ տնտեսական շինարարության բնագավառում ունենալիք կուսակցական գծի ըստ ամենայնի վորոշ և լրիվ լուսաբանության անհրաժեշտությունից։

Մեր կուսակցավորությունը, ոժանդակելով կուսակցական վորոշումների ճնարկման յեվ մշակման գործին՝ այդպիսով հանդիսանում է նաև վորպես ներկուսակցական բանվորական դեմոկրատիայի մի ելեմենտ։

Ուստի բնական է, վոր XV կուսհամագումարի, XVI կուսկոնֆերենցիայի յեվ կուսակցական ղեկավար մարմինների բոլոր նյութերն ու վորոշումները կենտրոնական տեղ գրավեն տնտեսական քաղաքականության խմբագրությունների աշխատանքում։

Ընթացիկ տարում տնտեսական քաղաքա՛նություն

թյան դասընթացքը հատուկ ուշադրություն պետք է դարձնի հնգամյա պլանի ուսումնասիրության վրա։ Ըստ ծրագրի՝ այդ պլանի ընդհանուր ցուցանիշները մշակվելու յեն IV թեմայով, ըստ վորում այստեղ առանձին ուշադրությամբ պետք է հետևել, վորպեսզի ունկնդիրը վորոշակի կերպով լուսաբանել կարողանա այն հանգամանքը, վոր հնգամյա պլանը կուսակցության գլխավոր գիծը կոնկրետացնող դիրեկտիվն է։ Այդ պատճառով էլ պլանին վերաբերող թեման դրված է գլխավոր գծի մասին խոսող գլուխներից հետո։ Այնուհետև հնգամյա պլանի հարցերը ավելի մանրամասն մշակման են յենթարկվում առանձին ճյուղերին վերաբերող գլուխներում։

Ծրագիրն իրենց ձեռքը պետք է ունենան թե ղեկավարը և թե ունկնդիրները։ Թե մեկին և թե մյուսին նա պետք է տա տնտեսական քաղաքականության թեորետիկական և քաղաքական դիրքավորումը։ Այդ պատճառով ընդհանուր ձևակերպումները ծրագրում ավելի ծավալուն կերպով են դրված։

Ծրագիրը պետք է սպասարկի նաև պարապմունքների մեթոդական ղեկավարության։ Դրա համար այն կազմելիս հատուկ ուշադրություն է դարձված հարցերի ծավալման մեջ հետևողականություն անցկացնելու հանգամանքի վրա։

Գործնականում ծրագիրը պետք է մշակման յենթարկվի տարբեր մակարդակ ունեցող աուդիտորիաներում, տարբեր կենցաղային և արտադրական պայմաններում։ Այս հանգամանքը, հասկանալի յե, պահանջում է ընկեր պրոպագանդիստներից ծրագրի սահմաններում վորոշ ճանապարհներ կատարել։

Իբրև հիմնական ձեռնարկ կարելի է ոգտագործել Березин, Бутбер, Кругликов, Лурье, Курбатов,—Экономическая политика СССР. հրատ. «Московский рабочий», 1929 г. Б. Толь и Л. Сераль—Экономическая политика советской власти, Госиздат 1928 г.

Դրանցից բացի հարկավոր է ոգտագործել—Ленин—Хрестоматия по экономическойи политике կազմել և Крумин-ը։ Տնտեսական քաղաքականության հարցերի սկզբնական ուսումնասիրության համար կարելի է գործածել նաև Б. Толь,—Пути сторительства социализма в СССР М. ГИЗ, изд. 3-е 1928 г.

Ինքնըստինքյան հասկանալի է, որ անպայման պետք է ոգտագործել կուսակցական կարևորագույն վորոշումները, հոդվածները և ճառերը, վորոնք լուսաբանում են տնտեսական շինարարության հարցերի (հատկապես XV կուսհամագումարի և կենակոմի ապրիլյան ու հուլիսյան պլենումների նյութերը)։

Յուրաքանչյուր թեմայի գրականության ցանկն ունկնդիրը կգտնի մարքսիստական-լենինիստական խմբակների և իրիկնային կուս-խորհրդային դպրոցների համար «в помощь партучебе ժուրնալի հրատարակությամբ լույս տեսած ձեռնարկներում։

I ԹԵՄԱ

ԽՍՀՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

• ԽՍՀՄ եկոնոմիկայի հինգ տնտեսական հանրակազմերը։ Ինչի համար խորհրդային երկրի տնտեսակարգը արդեն կապիտալիստական չէ, բայց և դեռևս սոցիալիստական էլ չէ։ Անցման շրջանը վորպես պրոլետարիատի դիկտատուրայի շրջան։ Դասակարգերը և դասակարգային պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի ժամանակ։

Պետձեռնարկությունները վորպես «հետեողական-սոցիալիստական տիպի ձեռնարկություններ» (Լենին)։ Շահագործման բացակայությունը խորհրդային պետական ձեռնարկություններում։ Տրանսպորտ, առևտուր, պետական վարկ (այս տնտեսական ձևերի սոցիալական եությունը ընութագրությունը)։ Սոցիալիստական տարրերի առաջնորդիչ դերը խորհրդային երկրի եկոնոմիկայում։ «Իշխող բարձունքները»։

Նահապետական (կիսանատուրալ) և մանրապրանքային տնտեսական ձևերը։ Նրանց տարբերությունը կապիտալիստական ձևերից։ Խորհրդային երկրի տնտեսության մեջ գոյություն ունեցող մինչ-կապիտալիստական ելեմենտների տեսակարար կշիռը։ Մանր ապրանքային տնտեսությունը (գյուղացիության հիմնական մասսան) վորպես կապիտալիզմի տարերային աճման հիմունք։ Մանր ապրանքային տընտեսության զարգացման սոցիալիստական ուղին և նրա պայմանները (պրոլետարիատի դիկտատուրա, նրա իշխող բարձունքների առաջնորդիչ դերը, նոր մեքենայական տեխնիկա, հողի ազգայնացում)։ Կապիտալիստական և սոցիալիստական ուղիների պայքարը։ «Ո՞վ ում» (Լենին)։ Դասակարգային պայքարը գյուղում։ Լենինի կոոպերատիվ պլանը և նրա կապը երկրի ինդուստրացման և էլեկտրիֆիկացիայի խնդիրների հետ։ Շրջանառության կոոպերացումից դեպի

արտադրության կոոպերացումը։ Լենինի կոոպերատիվ պլանի խեղաթյուրումն աջ ոպպոզիցիայի կողմից (արտադրական կոոպերացման թերագնահատումը, դասակարգային պայքարի սրողումը, «կուլտուրարության» լիբերալ ըմբռնումը, ինդուստրացման դերի՝ իբրև կոոպերատիվ պլանի իրականացման պայմանի թերագնահատությունը)։ Լենինի կոոպերատիվ պլանի ժխտումը տրոցկիստական ոպպոզիցիայի կողմից։

Մասնավոր-կապիտալիստական և պետ-կապիտալիստական ձևերը ԽՍՀՄ տնտեսության մեջ։ Կուլակ, նեպման, կոնցեսիոներ։ Սոցիալիստական ելեմենտների՝ կապիտալիստականների դեմ մղած պայքարի բնույթը—«ոգտագործում, հաղթահարում և վտարում»։

Մեր գրոհը քաղաքի և գյուղի կապիտալիստական ելեմենտների վրա և նրանց ընդդիմության ուժեղացումը։ Վորոշ ետապի վրա՝ դասակարգային կռվի սրման անխուսափելիությունը։ Դասակարգային կռվի թերագնահատությունը աջ ոպպոզիցիայի կողմից։

Կապիտալիստական զարգացման անհավասարաչափության որենքները։ Նրա հայտաբերման առանձնահատկությունների իմպերիալիզմի դարաշրջանում և սոցիալիզմի՝ «նախապես միքանի կամ նույնիսկ մեկ առանձին վերցրած կապիտալիստական յերկրում, (Լենին) հաղթանակ տանելու հնարավորության հարցը։

Սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը ԽՍՀՄ-ում։ Սոցիալիզմի հաղթանակի պայմանները ԽՍՀՄ-ում։ Ինդուստրացման արագ և լարված տեմպ։

«Հասնել և անցնել կապիտալիստական յերկրներից»։ Լենինն այս հնարավորության մասին։ «10—12 տարի ճիշտ փոխհարաբերություններ գյուղացիության հետ,— և-ապահովված է հաղթանակը համաշխարհային մասշտաբով, նույնիսկ ներկայումս աճող պրոլետարական հեղափոխությունների ձգձգման դեպքում» (Լենին)։

Կապիտալիստական ինտերվենցիայի և նրանից ազատ լինելու յերաշխիքների հարցը։ Տրոցկիզմի սխալները հոկտեմբերյան հեղափոխության բնույթի հարցում։ Տրոցկիստական վերաբերմունքը ԽՍՀՄ հաղթական սոցիալիստական շինարարության հնարավորության հանդեպ։ Այս սխալների սոցիալ դեմոկրատական բնույթը։ Աջ ոպպորտյունիստների սխալները։ Դասակարգային կռվի սրողումը և սոցիալիզմի կառուցման որյեկտիվ դժվարությունների թերագնահատությունը։ Սոցիալիզմի կառուցումն առանց ինդուստրացման լարված տեմպի, «կրիայի քայլերով»։ Այս սխալների լիկվիդատորական բնույթը։ Նրանց հատուկ վտանգը տվյալ ետապում։ Աջ վտանգի արմատները։ Սոցիալիզմի վերջնական հաղթանակը և համաշխարհային հեղափոխությունը։ Կառուցվող սոցիալիզմի յերկիրը վորպես համաշխարհային հեղափոխության հիմունք և պատնեշ։

II ԹԵՄԱ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՅԵՐԿՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ

Մարքսն ու Ենգելսը պրոլետարական դիկտատուրայի տնտեսական քաղաքականության հիմունք-

ների մասին։ Կուսակցության տնտեսական ծրագիրը մինչև Հոկտեմբերը—Լենինի 1917 թ. ապրիլի 4-ի թեզիսները և կուսակցության VI համագումարի վորոշումները։

Տնտեսական քաղաքականության առաջին շրջանը (1917 թ. հոկտեմբերից մինչև 1918 թ. կեսերը)։ Սոցիալիզմի կառուցման՝ 1918 թվին ասպարեզ հանված լենինյան պլանը։

Ռազմական կոմունիզմի սիստեմը։ Պրոլետարիատի և գյուղացիության ռազմաքաղաքական դաշինքը վորպես պրոլետարական դիկտատուրայի հիմունք ռազմական կոմունիզմի շրջանում։

Քաղաքացիական կռիվների ու ռազմական կոմունիզմի քաղաքականության տնտեսական և քաղաքական արդյունքները։ Պրոլետարիատի և գյուղացիության դաշինքը անտեսական հիմունքով ամրապնդելու (զողման) անհրաժեշտությունը։

Ռազմական կոմունիզմի դասերը. ռազմական կոմունիզմն իբրև «սխալ» (Լենին). ռազմական կոմունիզմն իբրև «յերախտիք» (Լենին)։ ՆԵՊ-ին անցնելու պատճառները։

ՆԵՊ-ը՝ պետական իշխանությունն իր ձեռքերում պահած պրոլետարիատի միակ ճիշտ տնտեսական քաղաքականությունն է։ ՆԵՊ-ի միջազգային նշանակությունը։ ՆԵՊ-ը վորպես արտադրողական ուժերի զարգացման և տնտեսության հետամնաց ձևերի սոցիալիստական «վերանորոգման» ճանապարհ։ Տնտեսության սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարը։ Ապրանքաշրջանառության կարգավորումը ՆԵՊ-ի ժամանակ և նրա նշանակությունը։ ՆԵՊ-ի տարբերությունը բուրժուական «առևտրի ազատությունից»։ ՆԵՊ-ի յերկու շրջանները։ Վերականգնման շրջան։ ԽՍՀՄ վերականգնման պրոցեսի արագ տեմպը։ ՆԵՊ-ի յերկրորդ շրջանը—վերակառուցման շրջանը։ Վերակառուցման շրջանի դժվարությունները։ Վերակառուցման յերկամյա փորձ (արագ տեմպ՝ արդյունաբերության մեջ, դանդաղած տեմպ՝ գյուղատնտեսության մեջ)։ Դասակարգային կռվի անխուսափելի սրումը վերակառուցման շրջանի սկզբում։ «Ո՞վ ում» հարցի նոր դրումը (պայքար՝ նոր տեխնիկայի հիման վրա արտադրությունը հասարակականացնելու համար)։ Սոցիալիստական գրոհ։ XV համագումարը և XVI կոնֆերենցիան վերակառուցման շրջանի մասին։

Աջ ոպպորտյունիստների սխալները ՆԵՊ-ի հասկացողության խնդրում։ ՆԵՊ-ի «լիբերալական» մեկնաբանությունը։ Շուկային հարաբերությունների ազատության սահմանափակման վախը։ Խուճապային ճիչեր «ՆԵՊի վերացման» մասին։ Աջ և «ձախ» (տրոցկիստների—նեպը նահանջ է միայն) սխալների կապը և տարբերությունը։

III ԹԵՄԱ

ԽՍՀՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄԸ

Ինդուստրացման եությունը և նրա նշանակությունը սոցիալիստական շինարարության գործում։ Արտադրության միջոցների արտադրման զարգացումը։ Ելեկտրիֆիկացիայի նշանակությունը։ Պետար-

գյունաբերության տեսակարար կշռի բարձրացումը և ղեկավար դերի ավելացումը։ Սոցիալիստական ինդուստրացում և կապիտալիստական ինդուստրացում։ Կապիտալիստական ինդուստրացման տիպերը։

Ինդուստրացման նշանակությունը ԽՍՀՄ անկախության ուժեղացման և նրա պաշտպանողականության բարձրացման համար։

Ինդուստրացումը վորպես պրոլետարիատի և չքավոր ու միջակ գյուղացիության դաշինքի հիմունք։

Գյուղատնտեսության զարգացման նշանակությունն արդյունաբերության ինդուստրացման համար։ Գյուղատնտեսության ինդուստրացումը վորպես ընդհանուր խնդրի անկապտելի մասը։ Ինդուստրացումը վորպես գյուղի սոցիալիստական վերակառուցման հիմունք։ Ինդուստրացումը վորպես գյուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող անհամաչափության վերացման միջոց։

Ինդուստրացման տեմպը։ Այս հարցի նշանակությունը։ Ինդուստրացման արագ տեմպը թելադրող արտաքին պայմանները։ Ինդուստրացման արագ տեմպը թելադրող ներքին պայմանները։ Ցերկրի ինդուստրացման հարցի շուրջ մղվող դասակարգային պայքարը։ Ինդուստրացման մեր պլանների քննադատությունը բուրժուական տնտեսագետների կողմից։ Այդ քննադատության քաղաքական փորձը։

Աջ ոպպորտյունիստները գնում են բուրժուական տնտեսագետների հետքերով։ «Նեղ տեղերի» հակաբայլշևիկական թեորիան։ Վախ՝ լարված տեմպերից։ Աջերի առաջարկների լիկվիդատորական բնույթը։ Մանր գյուղացիական տնտեսության «կլանման» վրա

հիմնված գերինդուստրացման տրոցկիստական թեորիան։ Այս թեորիայի սոցիալ-դեմոկրատական բնույթը։

IV ԹԵՄԱ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆԱՑՈՒՄԸ

Պլանային տնտեսությունը ԽՍՀՄ-ում։ Պետական և կոոպերատիվ հատվածներում պլանային ղեկավարությունն իրականացնելու ուղիները։ Հասարակայնացված հատվածի, հատկապես գյուղացիական տնտեսության վրա պլանային-կարգավորիչ ներգործություն ստեղծելու ուղիները։ Պլանի և շուկային տարբերության առնչությունը։ Տեխնիկական վերակառուցումը, հասարակայնացումը և նոր համեմատությունների սահմանումը ժողովրդական տնտեսության մեջ (նպատակային մոմենտի դերը պլանում)։

Իշխող բարձունքները վորպես պլանավորման հենակետեր։ Պլանների սիստեմը։ Գլխավոր և պերսպեկտիվ հնգամյա պլանը։ Կոնտրոլ թվերը։ Նրանց հիմունքները և փոխհարաբերությունները։

Մեր տնտեսական դժվարությունների բնույթը։ Նրանց արմատական տարբերությունները կապիտալիստական ճգնաժամերից։ Պլանավորման դժվարություններ ԽՍՀՄ-ում։

ԽՍՀՄ անճգնաժամ զարգացման հնարավորությունը՝ շնորհիվ ինդուստրացման և հասարակայնացման աճման հիմքում դրված պլանային սկզբունքի ուժեղացման։

Ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը։ Զարգացման հիմնական ցուցանիշները։ Կուսակցության գլխավոր գծի անդրադարձումը պլանում։ Արտադրության միջոցների արտադրման աճումը։ Մեր տնտեսության տեխնիկական վերազինումը։ Գյուղատնտեսության զարգացման ապահովումը։ Ժողովրդական հասույթի աճումը (քաղաքում և գյուղում)։ Մասսաների սպառման ավելացումը։ Քաղաքի և գյուղի անհամաչափությունների աստիճանական վերացումը։ Մեր տնտեսության զարգացման տեմպի համեմատությունը կապիտալիստական յերկրների զարգացման տեմպի հետ։ Ինդուստրացման բարձր տեմպի հիմնական ռեսուրսները (պլանային սկզբունքը, բուրժուազիայի անարտադրողական սպառման բացակայությունը, տեր-պրոլետարիատի դասակարգային գիտակցությունը, խիստ խնայողությունը և այլն)։

Հնգամյա պլանի՝ իբրև սոցիալիզմի կառուցման պլանի բնութագրությունը։ Հասարակայնացման պրոցեսները հնգամյա պլանի հեռանկարում։

V ԹԵՄԱ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետարդյունաբերությունը վորպես միասնական տնտեսական ամբողջ։ Պետարդյունաբերության կառավարման միասնականությունը։ Գլխավոր վարչության նշանակությունը։

Տրեստը և նրա նոր խնդիրները վերակառուցման շրջանում։ Տրեստների կազմակերպման սկզբունքները։

Սինդիկատները, նրանց տեսակները, ֆունկցիաները, տեղն արդյունաբերության կազմակերպման ընդհանուր սիստեմում։ Մեր արդյունաբերական միավորությունների տարբերությունը կապիտալիստականներից։

Արդյունաբերական կազմակերպչական հարցերը վերակառուցման շրջանում։ Պլանային սկզբունքի ուժեղացումը և ձեռնարկության առևտրական բարձր ինքնուրույնությունը։ Մասսաների ներգրումը արդյունաբերության կառուցման գործում։ Պրոֆմիությունների դերը։ Արտադրական խորհրդակցություններ։ Սոցիալիստական մրցությունը և նրա կազմակերպումը։

Ամբողջ արդյունաբերության պլանավորումը և դրա նշանակությունը։ Պլանայնացված մարմինները և նրանց փոխհարաբերությունները։

Մեր կոնցեսիոն քաղաքականությունը։ Նրա սկզբունքները, նշանակությունը և արդյունքները։ Մեր քաղաքականությունը արդյունաբերության մեջ գործող մասնավոր կապիտալի նկատմամբ։

Արհեստա-տնայնագործական արդյունաբերություն։ Նրա նշանակությունը ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ։ Տնայնագործական արդյունաբերության ծավալման խնդիրները։ Արհեստագործական կոոպերացիան վորպես տնայնագործական արդյունաբերության կազմակերպման ձև։ Արհեստագործական կոոպերացիայի կապը պետական մարմինների հետ։

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերակա-

ռուցումը և սոցիալիստական մրցությունը։ Կապիտալ շինարարությունը վորպես արդյունաբերության արմատական ռացիոնալացման ճանապարհ։ Կապիտալ շինարարության հնգամյա պլանը։ Ամենամեծ առաջադրություններ բովանդակող արդյունաբերական ճյուղերն ըստ հնգամյա պլանի։ Արդյունաբերության ուժաբաշխ բազայի փոփոխությունը հնգամյա պլանում և էլեկտրոստանցիաների կառուցման պլանը։ Տրանսպորտային շինարարությունը և նրա ազդեցությունն արդյունաբերության զարգացման վրա։

Կապիտալ շինարարության ֆինանսավորման հնգամյա պլանը։ Ֆինանսավորման աղբյուրները։ Պլանի լարվածությունը։ Ներարդյունաբերական կուտակման խնդիրները և արդյունաբերության ներքին ռեսուրսների մոբիլիզացիան։ Կապիտալ շինարարության՝ նախորդ տարիների փորձից յերևան յեկած պակասությունները։ Մասսաների խնդիրները՝ հնգամյա պլանի անցկացման համար պայքարելիս։ Արդյունաբերական ապրանքների գների իջեցումը վորպես մեր տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը։ Ապրանքների բաց թողման գների հիմունքը ինքնարժեքի իջեցումն է։ ԽՍՀՄ պետարդյունաբերության ինքնարժեքի դինամիկայի հիմնական թվական տվյալները։ Ինքնարժեքի հիմնական ելեմենտները։ ԽՍՀՄ պետարդյունաբերության ինքնարժեքի հետագա իջեցման հնգամյա պլանը, նրա վերլուծությունը։

Արտադրության սոցիալիստական ռացիոնալացումը վորպես ինքնարժեքի իջեցման ճանապարհ։ Ընտադրության տեխնիկայի ռացիոնալացումը։ Աշխատանքի կազմակերպման ռացիոնալացում։ Կապիտալիստական ռացիոնալացում և սոցիալիստական ռացիոնալացում։ Սոցիալիստական ռացիոնալացումը և բանվոր դասակարգի դրությունը։ Ռացիոնալացումը և աշխատանքի ինտենսիվությունը, աշխատանքային դիսցիպլինան, բանվորական ժամանակը և աշխատավարձը։ Ռացիոնալացման հետևանքով ազատվող բանվորական ուժի պլանային տեղավորման և ոգտագործման անհրաժեշտությունը։

Տրոցկիզմի ամբոխավարական-անձնատրական վերաբերմունքը ԽՍՀՄ բանվոր դասակարգի սոցիալիստական ռացիոնալացման համար մղած պայքարի հանդեպ։ Բանվոր դասակարգի և խորհրդային գիտական—տեխնիկական ուժերի ակտիվության մոբիլիզացիան վորպես խորը և բազմակողմանի ռացիոնալացման հաջող իրականացման անհրաժեշտ պայման։

Բանվոր դասակարգի թվական քանակությունը և պրոֆմիությունների անդամների թվական քանակությունը։ Բանվոր դասակարգի տեսակարար կշիռը ԽՍՀՄ ազգաբնակչության մեջ։

Պրոֆմիությունների դերը ԽՍՀՄ իբրև կոմունիզմի դպրոցներ։ Պրոֆմիությունների մասնակցությունը արդյունաբերության կազմակերպման մեջ։ Մեր պրոֆմիութենական կազմակերպությունների թերությունները։

Աշխատավարձի կատեգորիան ԽՍՀՄ տնտեսության մեջ։ Աշխատավարձի ձևերը։ Աշխատավարձի քաղաքականությունը։ Աշխատավարձի և աշխատանքի արտադրողականության աճումը։ Ինքնարժեքի իջեցման միջոցով ռեալ աշխատավարձը բարձրացնելու խնդիրը։ Աշխատավարձի հեռանկարները։

Ա. Մեսրոպյանի անվան Հանրապետական գրադարան
Публичная Библиотека
14855-57

Սոցիալական ապահովագրությունը, նրա չափերը և կազմակերպությունը։ Սոցիալական ապահովագրության դերը բանվոր դասակարգի կյանքի վերելքում։ Բանվորական որը և աշխատանքի պայմանները։ Կենտգործկոմի վորոշումը 7 ժամյա բանվորական որվա մասին։ 7 ժամյա բանվորական որվա անցկացման փորձը։ 7 ժամյա բանվորական որվա անցնելու տնտեսական և կուլտուրական նշանակությունը։ 7 ժամյա բանվորական որ մտցնելու հնգամյա պլանը։ Անընդհատ բանվորական շաբաթվա անցնելու խնդիրը և նրա նշանակությունը։

Խորհրդային մասնագետների նոր կադրերի և վարակյալ բանվորական ուժի նախապատրաստման պրոբլեմը։

Գործազրկության պրոբլեմը ԽՍՀՄ։ Գործազուրկների կազմի և թվական քանակի շարժումը։ Գործազրկության պատճառները։ ԽՍՀՄ գործազուրկության առանձնահատուկ բնույթը կապիտալիստական յերկրների գործազրկության համեմատությամբ։ Գործազրկության ատիճանական վերացման մեթոդները։ Գործազուրկներին ոժանդակություն ցույց տալու մեթոդները։

VI ԹԵՄԱ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պրոլետարական դիկտատուրայի իշխող բարձրունքների զարգացումը վորպես գյուղի սոցիալիստական

վերաշինության պայման։ Սոցիալիստական վերաշինության համար մղվող պայքարը վորպես կուլակության գյուղում վարած քաղաքականության կենդրոնական խնդիր։ Զքավոր և միջակ գյուղացիության տնտեսության կոլլեկտիվացումը վորպես գյուղատնտեսության բնագավառի սոցիալական և նյութական-արտադրական խնդիրների լուծման հիմնական ճանապարհ։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա նշանակությունը գյուղացիության համար։ Խորհրդային գյուղի «միջակացումը» ազրարային հեղափոխության հետևանքով։ Կուլակության նյութական-արտադրական և սոցիալական հանրագումարները գյուղում (թվական տվյալներ գյուղատնտեսության վերականգնման մասին)։ Գյուղատնտեսության ինտենսիվության ուժեղացումը նրա վերականգնման տարիներին։ Գյուղատնտեսության չափից դուրս հետ մնալը։ Այս յերևույթի որյեկտիվ պատճառները։ Գյուղատնտեսության բաժանվածության (раздробленность) նշանակությունը։ Հացահատիկային տնտեսության առանձնակի ծանր վիճակը։ Դրա պատճառները։ Անասնաբուծության ընագավառի դժվարությունները։ Աշխատավորական ինտերնացիոնալի թեզիսն գյուղատնտեսության դեգրադացիայի մասին։ Այս թեզիսի քաղաքական իմաստը (յելույթ՝ Համ Կ(բ)Կ 15-րդ համագումարի վորոշումների դեմ)։ Այս թեզիսի հակափաստերը։ Խորհրդային գյուղի շերտավորման առանձնահատկությունները։ Այս առանձնահատկությունների 15-րդ կուսհամագումարի կողմից տրված բնութագրությունը։

Կուսակցության քաղաքականության եյության

բնութագրությունն ըստ Համկ(բ)կ 14-րդ համագումարի և 14-րդ կուսակոնֆերենցիայի։ Կուսակցության այս շրջանում վարած քաղաքականության հիմնական հանրագումարները։ Գյուղում կատարելիք աշխատանքի՝ կուսակցության 15-րդ համագումարի և 16-րդ կոնֆերենցիայի նշած հիմնական գիծը։ Զոդման նոր ձևերը։ Արտադրական կոոպերացումն ու կոլեկտիվացումը վորպես կենդրոնական խնդիր։ Չքավորության մեջ կատարելիք աշխատանքի ուժեղացումը, միջակի հետ կապած դաշինքի ամրապնդումը և պայքար՝ կուլակի դեմ։ Գյուղի կապիտալիստական ելեմենտների աճումը սահմանափակելու և գյուղատնտեսական արտադրության սոցիալիստական և հասարակական ձևերն ուժեղացնելու ուղղությամբ, կուսակցության 15-րդ համագումարի և 16-րդ կոնֆերենցիայի նշած գործնական ձեռնարկումները։ վարձակալության սահմանափակումը և վարձու աշխատանքի կիրառումը։ Կոլտնտեսությունների խոշորացումը։ Մեքենա-տրակտորային կայաններ։ Նոր խորհրդային տնտեսություններ։ Խորհրդային տնտեսությունների շինարարության հընդամյա պլանը։ Խորհրդային տնտեսությունները և գյուղին ցույց տրվելիք աջակցությունը նրա տնտեսության վերակազմության գործում։ Հողագործման հիմնական սկզբունքների նոր որենքը։

Հացի գների բարձրացման քաղաքական նշանակությունը։ Գյուղատնտեսական հարկի նոր որենքը և նրա նշանակությունը։ Գյուղի սոցիալիստական շինարարության կազմակերպման համար աշխատողների նոր կադրեր ստեղծելու պրոբլեմը։

Գյուղացիության ղեկավարման մեթոդների մասին։ «Կարողանալ համաձայնության գալ միջակ-գյուղացիության հետ վոչ մի բոպե չհրաժարվելով կուլակի դեմ պայքարելուց և ամուր հենվելով չքավորության վրա» (Լենին)։ Պայքար՝ «զինջուների» ոպպորտունիստական թեորիայի դեմ։ Գյուղում սոցիալ-դասակարգային և արտադրա-կազմակերպչական հենակետեր ստեղծելու խնդիրը։

Հացամթերման ճգնաժամը և նրա պատճառները։ Կուլակների կազմալուծական դերը։ Ընդդիմադրության ուժեղացումը։ Կապիտալիստական ելեմենտների ուժեղացրած վտարման խնդիրը։ Անհատական հարկումը (обложение)։ Հացամթերումների ժամանակավոր արտակարգ միջոցները։ Կուլակի վրա հասարակական ճնշում գործ դնելու միջոցներ — չքավորների և միջակների համախմբումը պրոլետարական պետությանն ոժանդակելու գործում և կուլակներից կտրվելը։

Աջերի ոպպորտունիստական թեորիան կուլակի և կուլակային միավորությունների սոցիալիզմի սիստեմի մեջ ներաճելու մասին։ Այս թեորիայի անհաշտելիությունը լենինիզմի հետ։ Աջ թեորիաների գործնական վնասը։

Գյուղատնտեսական հնգամյակի հիմնական խնդիրն է՝ ուժեղացնել գյուղատնտեսության վերելքը, ընդլայնել հացահատիկային պրոբլեմը և սոցիալիստական հողագործության հզոր մասսիվ ստեղծել (ապրանքային հացի 40 տոկոսը)։ Անհատական չքավորական-միջակային տնտեսության զուգակցումը կոլեկտիվացման ուժեղ պրոցեսին։ Այս խնդիրների հակադրման անճշտությունը։

Գյուղատնտեսական հնգամյակի հիմնական ձեռ-

նարկումները—բերքատվության բարձրացման պարզագույն միջոցները (կենսագործկոմի դեկրետը)—հացահատիկների զտումն ու տեսակավորումը, պայքար ճնաստուների դեմ, վատ սերմերը տեսակավոր սերմերով փոխարինելը, ագրոտեխնիկայի ուժեղացումն ու բարվոքումը։

Մեքենայացում և տրակտորիզացիա։ Նոր գործարաններ։ Մեքենա-տրակտորային կայաններ։ Տրակտորային սյունակներ։ Հացահատիկային տրեստի (зернотрест) 100 տոկոսով մեքենայացրած վիթխարի խորհրդային տնտեսությունները։ Շաքարտրեստի խորհրդային տնտեսությունների մեքենայացումը։ Ձիու քարշողական ուժի վտարումը և արդյունավետ անասնաբուծության աճումը։

Քիմիացում և միներալիզացիա։ Քիմիական արդյունագործության վիթխարի շինարարության ծրագիրը։ Ծծմբային պարարտացումներ և բորակային պարարտացումներ։ Կալիի պարարտացումներ։ Կրայնացում (известкование)։

Հողաշինարարության, արհեստական վոռոգման (ирригация), ցամաքեցման, ջրաբաշխման և այլ աշխատանքների խնդիրները։ Ցանքսային տարածության ընդարձակումը հին և նոր ռայոններում։ Ընդարձակածավալ ռայոնների ընակեցման նոր տիպը։

Ագրարային գերբնակչության կրճատումը հընդամյա պլանի հեռանկարում։

Գյուղատնտեսական կոոպերացիան։ Գյուղատնտեսական կոոպերացիայի և գյուղատնտեսական վարկի կազմակերպչական կառուցվածքը։ Գյուղատնտեսական կոոպերացիայի դերը ապրանքաշրջանառության

մեջ կոոպերացման տեմպը գյուղատնտեսական կոոպերացիայի զանազան տեսակների մեջ։ Գյուղատնտեսական կոոպերացման նոր խնդիրները գյուղի կոլեկտիվացման գործում։ Գյուղատնտեսական կոոպերացիայի դասակարգային դեմքը։ Գյուղատնտեսական վարկը, նրա պակասությունները և նվաճումները։ Գյուղատնտեսական վարկի սոցիալական ուղղությունը։

Կոնտրակտացիան որպես գյուղատնտեսության տեխնիկական և սոցիալական վերակառուցման մեթոդ։ Կոնտրակտացիան որպես արդյունաբերության միջոցով գյուղատնտեսության վրա ներգործելու յեղանակ։ Կոնտրակտացիան որպես կոոպերատիվ աշխատանքի մեթոդ։ Կոնտրակտացիոն պրակտիկայի թերությունները։ Կոնտրակտացիայի վիթխարի թափը։ Գյուղի կուլտուրական խնդիրները հնգամյակի խնդիրների կապակցությամբ։ Ագրոպրոպագանդա։ Կադրերի նախապատրաստություն։ Պայքար՝ տերտերականության և կուլակային իդեոլոգիայի դեմ։

VII ԹԵՄԱ

ԵՐԵՎԱՆԻ ՐՆԿԳԱՎԱՌԻ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ

Առևտուրը որպես սոցիալիստական հատվածի և մասնավորապրանքային հատվածի կապման ձև։ Լենինը անցման շրջանի առևտրի նշանակության մասին։ Առևտուրը և զոդումը բանվոր դասակարգի և գյուղացիության հետ։

Առևտրի տեսակները—պետական, կոոպերատիվ և մասնավոր։ Առևտրի զանազան տեսակների փոխհարա-

բերության դինամիկան (քաղաքային և գյուղական ապրանքաշրջանառության մեջ)։ Մասնավոր առևտրի գոյության անխուսափելիությունը (վորոշ սահմաններում, մեր տնտեսական զարգացման տվյալ աստիճանի վրա)։ Մասնավոր առևտրի ոգտագործումը ապրանքաշրջանառության զարգացման համար և միաժամանակ նրա վտարումը պետական առևտրի և կոոպերացիայի միջոցով։ Ապրանքաշրջանառության սֆերայում մասնավոր առևտրի դեմ պայքարելու մեթոդները։ Հասարակականացումը ապրանքաշրջանառության սֆերայում ըստ հնգամյա պլանի։

Պետական (ներքին) առևտրի կազմակերպումը — սինդիկատներ, աճուրդներ, տրեստներ, պետական ակցիոներական ընկերություններ, նրանց տարբերությունը կապիտալիստականից։ Պետական առևտրի նշանակությունը մեծածախ և մանրածախ ապրանքաշրջանառության մեջ։

Կոոպերատիվ առևտուրը։ Սպառողական կոոպերացիան, նրա կազմակերպչական կառուցվածքը։ Սոցիալական ցանցի կացությունը քաղաքում և գյուղում։ Սպառողական կոոպերացիայի սոցիալական կազմը։ Սպառողական կոոպերացիայի թերությունները և նրանց դեմ պայքարելը։ Աղգաբնակչությանը կոոպերացիայի մեջ ներգրավելու մեթոդները։ Գյուղատնտեսական և արհեստագործական կոոպերացիայի առևտրական գործունեությունը։ Պետական առևտուրը և կոոպերացիան։

Շուկայի կարգավորման նշանակությունը սոցիալիստական շինարարության մեջ. Պլանային և տարածքային սկզբունքների պայքարը շուկայում։ Շուկայի

կարգավորման դժվարությունները տնտեսական անհամաչափության պայմաններում։ Շուկան վորպես դասակարգային պայքարի դրսևորման շրջանակ (կուլակը, մասնավորը)։

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության շուկային արտադրանքը։ Նրա սպառումը հասարակայնացված և չհասարակայնացված հատվածներում։ Հացամթերումների և գյուղատնտեսական հումքի մթերումների նշանակությունը։ Գների քաղաքականությունը գյուղատնտեսական ապրանքների մթերման գործում։ «Վերականգնիչ գնի» (восстанителновиая цеиа) կուլակային պահանջները և նրանց անդրադարձումը տրոցկիստների և աջ թեքումականների մոտ։ Հացամթերման ապպարատը, նրա թերությունները և նրա ռացիոնալացման խնդիրը։ Հացամթերումների և գյուղատնտեսական հումքի մթերումների կարգավորման հիմնական սկզբունքները։ Արդյունաբերական ապրանքների պլանային մատակարարումը։ Հացի մատակարարումը և հումքային ռայոնները։ 1927/28 և 1928/29 թ. թ. հացամթերումների դասերը։ Արդյունաբերական ապրանքների շուկայի կարգավորումը վորպես քաղաքային աղգաբնակչության պարենավորման ապահովման և գյուղատնտեսական արտադրանքների մթերման գործի հաջողության անհրաժեշտ պայման։ Գլխավոր պայմանագրերը և արդյունաբերական ապրանքների պլանային մատակարարումը։ Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրանքների գների փոխհարաբերությունը և «մկրատի» ծայրերի մոտեցման անհրաժեշտությունը։ Գների պրոբլեմը հնգամյա պլանում։ Խորհրդային իշխանության հիմ-

նական գիծը գների քաղաքականության ասպարեզում։

Մեծածախի և մանրածախի «մկրատը»։ Արդյունաբերական ապրանքների ինքնարժեքի և մանրածախ առևտրի գների իջեցման խնդիրը։

Արդյունաբերության առևտրական վերադրումները գյուղատնտեսական ապրանքների վրա։ Ապրանքատարական ցանցի ռացիոնալացման խնդիրները և նրա վերադիր ծախքերի կրճատումը, այդ կրճատման միջոցները։ Վաստակի կարգավորումը պետական առևտրում և կոոպերացիայում։ Մասսաներին գների իջեցման համար մղվող պայքարում ներդրավելու նշանակությունը։ Վերադրումների (накидка) և գների կարգավորման մեթոդների վերլուծությունը մասնավոր առևտրի ասպարիզում։ Առևտրի ասիճանական մահացման ուղիները։

Արտաքին առևտրի մենաշնորհը և նրա նշանակությունը սոցիալիստական շինարարության համար։ Լենինը արտաքին առևտրի մենաշնորհի մասին։ Արտաքին և ներքին առևտրի կապը և նրանց կարգավորման միասնականությունը։ Արտաքին առևտրի կազմակերպությունը—Առևտրի ժողովրդական կոմիսարիատ, արտահանման և ներածման ակցիոներական ընկերությունները։ Պետառ, արտասահմանյան առևտրական ապպարատ (առևտրական ներկայացուցչությունները)։ Արտաքին առևտրի նշանակությունը սոցիալիստական շինարարության համար։ Մեր՝ համաշխարհային շուկայից անկախության ուժեղացման գիծը և ոպպոզիցիայի սխալները այս հարցում։

Արտաքին ապրանքաշրջանառության աճումը։ Արտաքին առևտրի՝ մեր տնտեսության ընդհանուր

զարգացումից հետ մնալու պատճառները։ Տնտեսության արտահանման ճյուղերի զարգացման խնդիրը։ Արտահանության կազմակերպման թերությունները։ Ցերկրի ինդուստրացման և մեր տնտեսական անկախության ուժեղացման հետևանքով ներածման և արտածման գործի կառուցվածքում կատարելիք փոփոխությունները։ Ակտիվ բալանսի քաղաքականությունը։

VIII ԹԵՄԱ

ՖԻՆԱՆՍՆԵՐԸ ՑԵՎ ՎԱՐԿԸ

Բյուջեն և հարկային քաղաքականությունը։ Պետական բյուջեն որպես սոցիալիստական շինարարության գործիք։ ԽՍՀՄ պետական բյուջեն։ ԽՍՀՄ պետական բյուջեյի յեկամտային մասի կազմությունը։ Մուտքի հարկային և վոչ հարկային աղբյուրների առնչությունը։ Պետական փոխառությունները։ ԽՍՀՄ պետական բյուջեյի յեկամտային մասի կազմությունը ցարական Ռուսաստանի և կապիտալիստական յերկրների պետական բյուջեների համեմատությամբ։ ԽՍՀՄ հարկային սիստեմը, նրա սոցիալ-դասակարգային դրումը։ Ցեկամտային հարկ։ Գյուղատնտեսական հարկ։ Ուղղակի և անուղղակի հարկերի առնչությունը ԽՍՀՄ պետական բյուջեյում։

Հարկման ծանրությունը մինչև հեղափոխությունը և հիմա։ Հարկային բեռան բաշխումը քաղաքի և գյուղի միջև։ Պետական բյուջեյի յելից (расходный) մասի կազմությունը։ Վարչական, յերկրի պաշտպանության, կուլտուր-սոցիալական և ժողովրդական տնտեսության ֆինանսավորման ծախսերի առնչու-

թյունը։ ԽՍՀՄ պետական բյուջեյի յելից մասի կազմությունը՝ կապիտալիստական յերկրների հետ համեմատած։ Տեղական բյուջեն։ Նրա նշանակությունը խորհուրդների աշխուժացման քաղաքականության մեջ (ինքնահարկումը)։ Խորհրդային իշխանության ազգային քաղաքականության անդրադարձումը պետական և տեղական բյուջեների կազմության մեջ։

Կայուն դրամական շրջանառության նշանակությունը ապրանքաշրջանառության ճիշտ գործառնության և արտադրողական ուժերի ու յերկրի ինդուստրացման զարգացման համար։

ԽՍՀՄ դրամական շրջանառության սիստեմը դրամական ռեֆորմից հետո։ Գանձարանային և բանկային եմիսսիա։ Չերվոնեցի գնողունակության կանոնավորումը։ Եմիսսիոն քաղաքականությունը։ Վարկային եմիսսիայի սահմանները վերականգնման և վերակառուցման շրջաններում։ Ապրանքային սովը և պայքար՝ չերվոնեցի կայունացման համար։ Գների իջեցման նշանակությունը մեր չերվոնեցի կայունացումն ամրապնդելու խնդրում։ Բանկային վարկը։ Վարկի ֆունկցիաները ԽՍՀՄ տնտեսության մեջ։ Վարկի սիստեմը վորպես պլանային տնտեսության միջոց։ Վարկային սիստեմի կազմությունը։ Պետբանկ և ժյուս պետական բանկերը։ Պետական ակցիոներական բանկերը։ Բանկերի ռոպերացիաների աճումը։ Սեփական և ոտար միջոցների փոխհարաբերությունը Պետբանկի և հատուկ բանկերի բալանսում։ Հաշվառքային-փոխադրական և ավանդառուական գործառնությունների փոխհարաբերությունը։ Տոկոսաբեր դրույքները և իջեցման խնդիրները։ Վարկային սիստեմի խնայողության

ռեժիմը և նրա ռացիոնալացման խնդիրը։ Տվյալներ ժողովրդական տնտեսության կարևորագույն ճյուղերի վարկավորման մասին։

Պետական փոխառությունները վորպես ինդուստրացման համար կատարվող կուտակումների ոգտագործման միջոցներ։ Պետական փոխառությունների դերը պետական բյուջեյում։ Զանազան սոցիալական խավերի մասնակցությունը պետական փոխառությունների զեռեղման մեջ։ Պետական խնայողական գանձարկղները և նրանց դերը։ Խնայողական գանձարկղներում դրվող ավանդների ավելացման միջոցները։ Վարկային սիստեմն ամբողջությամբ առած՝ վորպես ժողովրդական տնտեսության կուտակումների վերաբաշխման և կարգավորման միջոց։ Վարկը վորպես ինդուստրացման և սոցիալիստական տնտեսության շինարարության լծակ։

IX ԹԵՄԱ

ԽՍՀՄ ՑԵՎ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ և համաշխարհային տնտեսության արտադրողական ուժերը։ ԽՍՀՄ տեսակարար կշիռը համաշխարհային տնտեսության մեջ։ ԽՍՀՄ զարգացման և կապիտալիստական յերկրների զարգացման համեմատական տեմպերը։ Խորհրդային սիստեմի առավելությունները կապիտալիստական սիստեմի հետ համեմատած։

Համաշխարհային կապիտալիստական տնտեսության ԽՍՀՄ վրա ունեցած ազդեցության հարցը։ Համաշխարհային շուկայի ճնշումը և արտաքին առևտրի մենաշնորհները։ Գների մակարդակում յեղած տարբե-

րութիւնը։ Ոտարերկրյա կապիտալների ներդրման հարցը և մեր տնտեսութիւնը ներքին կուտակման հիման վրա վերակառուցելու հնարաւորութիւնը։ Տնտեսական բլոկադա և նրան ընդդիմադրելու հնարաւորութիւնը։

ԽՍՀՄ անկախութիւնը և աշխատանքի հա՛՝աշխարհային բաժանումը։ Զարգացման հնարաւորութիւնը վորպես հակակշիռ պատմականորեն դրված աշխատանքի բաժանման։ Մեր զարգացման հետագա տեմպի հարցը։ Միջազգային սոցիալ-դեմոկրատիայի բռնած դիրքը։ Տրոցկու գիծը։ Բուրժուական տնտեսագետների բռնած դիրքը։

Սոցիալիստական շինարարութեան դժվարութիւնները կապիտալիստական ողակավորման պայմաններում։

ԽՍՀՄ կապիտալիստական աշխարհից անկախութեան աճումն ըստ հնգամյա պլանի տվյալների։ Արտաքին առևտրի բնույթում կատարելիք փոխութիւնները մինչ-հեղափոխական դրութեան կապակցութեամբ։

Արտաքին վտանգը։ Պաշտպանութեան նախապատրաստութիւնը և մեր տնտեսական շինարարութիւնը։

ԽՍՀՄ սոցիալիստական շինարարութիւնը վորպես միջազգային հեղափոխութեան աղդակ և բաղադրիչ մաս։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ
Публичная Библиотека

«Ազգային գրադարան»
NL0210800

32.021

ՀՀ Ազգային գրադարան
NL0209543